

անենք նմա զողորմութիւն Սամարացոյն : Մինն է մահ և ծանօթութիւն տան ծնողացն սրբոյն Ալէքսիանոսի : Եւ մինն է փրկիպոսի կաթուղիպոսն :

59-64. Այլ պատկերք ևս ի կողմն Հարաւային դրան սառարին կախեալք կան յորմոյն : ԅորոք մինն է ըմբռնումն Տեառն : Մինն է տեւիքն Յակոբայ՝ որ ետես սանդուխտ Հաստատեալ յերկրէ յերկինս : Մինն է մտանելն իմաստուն կուսանացն ի յառազաստ փեսային , և յիմարացն մնան արտաքոյ : Մինն է անկանիչն աղբատին Ղազարոսի ի դուռն մեծատանն , և լիզել շանցն զվերս նոցա , 7 և զեխիլ մեծատանն : Մինն է անտեսին՝ որ զհաշիւս փոխատուաց տեառն իւրոյ ինդրէ , թէ քանի ի՛նչ պարտիս տեառն իմոյ : Իսկ մինն է մեծ քան զսոսա , որ է օրհնել Տեառն զաշակերտսն ի ժամ՝ Համբարձման , որ է ի մէջ խորանածէ կերտուածոյ : Իսկ յարձէ և յահեկէ խորանածեւին , են պատկերք սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պողոսի , որք են մեծք : Եւ առ ընթերի իւրեանց՝ զլիւվայր խաչին Պետրոսի , և զլիտառիչն Պողոսի . Ե այս յիշատակ Բիւթիւր Պետրոս վարդապետին :

64-67. Քսաներեք պատկերք՝ շարեցեալք ի մէջ մեծի կաթուղիպոսի ի վերոյ , որք են բարոր ստորեւութիւնք Տեառն՝ Այսիկքն՝ Աւետիքն : Ծնունդն : Քառասներորդ գալուստն ի տաճարն : Կոտորումն մանկանցն Բեթղէհէմի : Մկրտութիւն : Այլակերպութիւն : ԅարուցանելն զՂազար : Գան յերուսաղէմ յաւանակաւ : Ատնայուայն : Ընթերիքն : Աղօթելն և զօրանայն ի հրեշտակէն և ըմբռնիչն : Կապիլն ի սիւնն քարեայ և ձաղիլն : Պատկիւն փշով և զգնուոյն զքղամիզն : Բառնան ի յուս զխաչն , և երթալն ի Գողգոթայ : Բեւեռնիլն ի խաչափայտին : Իրուցանելն ի խաչէն : Նստեալ մերկ ի վերայ գերեզմանին , և շուրջ զիւրեւ ամենայն գործք շարչարանացն : Աւերելն զգժօտան և ազատելն զՏօգիւնն : ԅարութիւն : Համբարձումն : Գալուստ Հոգւոյն սրբոյ : Միւս անգամ գալուստն՝ և դատաստանն ահաւոր : Եւ վերափոխումն ամենօրհնեալ Ս . կուսին Մարիամու :

68. Մի պատկեր ևս մեծ և խորանածէ , որ եղեալ է ի գլուխ մեծի դրան սրբոյ տաճարին , յարտաքին կողմն , որ է իրուն Միածնին ի սուրբ տաճարս այս՝ և պատկերք Տօր Աստուծոյ և Հոգւոյն սրբոյ՝ նաև սուրբ Լուսաւորչին՝ և խորհրդածու հրեշտակին , Տրգասալ , և քեռ

նորին և կնոջն , և այլոց բազմաց . և ձեք սրբոյ տաճարիս , և սրբոց վանօրէիցն Հուրիփիմեանց , Գայիանեանց , և Շողակաթին : Չոր սրբազան Արմէոն կաթուղիպոսն ես նկարել նորապէս , զի առաջինն հնացեալ և փտեալ էր :

Աւերգրեցեալ մէկ թուղթ և կէս պատկերացս զամն է՝ ութսուն և ութ . Ի ՌՄԻԷ թուոջս , և ի յօգոստոսի ծ գրեցաւ :

ՓԻԼԻՍՈՓՈՍԱԿԱՆ ՄԻՋՆԱԳՐՈՒԹԻՒՆՏ

Ա . Կրնաք գտակաւ հօգետեսել՝ որ նախամարդը , իր անմեղութեան վիճակին մէջ , հօգի մեծ ու մեծու՛կ և անմահութեամբ շափ հարդք անմահութեան մեծ ալբիւր-հոգիին , մարմին ապականացու անապականութեամբ շափ կցող անապական տիեզերքի համարողը նիւթին՝ կ'արձագանգէր մեծ Հոգին ու մեծ Բանն՝ անգիր ներշնչական գիտութեամբ գիտուն բարբառով մը . անմեղութեան արծիւք տիեզերքի մեծ վանդակին՝ գրգալով և հարդրգարարաբար ճախրելով անոր տեսիլներուն և տեսարաններուն վրայ , այսինքն՝ միտ գնալուն շարժուն վիճակի մէջի պէս . չունէր որոշ պահեմ՝ ո՛չ քնելու , ո՛չ ուտելու , ո՛չ կողմնելու , ո՛չ յառաջելու , այլ երբ ու ինչպէս որ կը թելադրէին իրեն իր անաղջ զգայալանքը կարիքն ու ազգեցութիւնը մայր բնութեան . . . Ինք բանեղէն քերթուած ու քերթող մը . նախահայ զուարթուն , որ կ'ապրէր ու կ'երգէր բովանդակ տիեզերքը Բարդուխիւմեոս . աւաղ , իր կորած բաստին :

Բ . Ինչ որ այլք կը խօսին քու ինչութեանդ վրայ՝ զու ան չե՛ս , այլ պէտք է մինչև աստիճան մը համարիս ինքզինքդ այնպէս՝ խնայութեամբ և խաղաղութեան համար . ինչ որ զուն կը համարիս ինքզինքդ՝ զու ան ալ չես . այլ քու անձնատես կիրքդ է՝ որ շատ մասերով գրեցքեզի այնպես կը ցուցընէ եթէ ոչ թերատեսութիւնդ . ինչ որ ճշմարտութիւնն և գործերուդ յաւիտենական արդիւնքը կը դիտեն ու կը սահմանեն քեզ յաւիտենապէս՝ զու ան իսկ ես . երանի՛ քեզի՛ եթէ կրցար փրկիստփայտիս այ՛դ դիտակէն սրբապիլ զքեզ :

Կ . Կրօններու արտայայտիչ ձեւերն ու աստուածաբանութիւնները բուն իբր ետութիւնները

կրօնքի՝ անողք բունելը, կրօնքի մեծ էութիւնն — Աստուած — ուրանայու ծոտ յամառ յիմարութիւն է, և փոխան անոր՝ այդ ձեւերն ու աստուածաբանութիւններն աստուածացնելու չափ անկրօնութիւն և անաստուած էթիւն է՝ հունկերու համար անհունի մը մէջ, որ Աստուծով կը դառնայ:

Դ. Ինչու՞ շատ անգամ մեր չուզածին աննկատելի կը վիճակինք, վասն զի ընդհանրապէս անոր արժանի էինք կամ մեր մեղքէն կամ մեր վարձքէն՝ բարձրագէտ ստօրիւնութեամբ:

Ե. Գարձեալ գտակա կրնանք հոգետեսել՝ որ նախամարդութեան խօսած լեզուն պարզ, հակիրճ ու ձիջոգ ասկիւնքն էր՝ իբրև նախամտածող հանձնարին աշխարհի, իբրև նախահիացողին ստեղծեալ տիեզերքի ահագեղ փառքին վրայ:

Ձ. Օրինակուած օրէնսդուութիւնը հայրենասիրութիւնը և ինչ և է հասարակաց կարգը՝ չեն ըլլար ազգի մը համար տեսական ու օգտաբեր այնքան, որքան հանձարի միջոցով ըստեղծուած շրջագիտուած և զոռոջ գասողութեամբ պատշաճեցուցուածները, ուր տեղական իմաստութիւնը մեծ իմաստութեան լծելու չափ հոգետեսութեամբ օժտուած է օրէնսդիր հանձարը կամ օրէնսդրական աւագածողովը: Այս կողմէն շատ տուժած է հայ ազգն ալ:

Ի. Արեւելեան ուղղափառ եկեղեցին պահած է մեծ նիշեր նախնական կեանքի, հաւատքի ու շնորհնութեանց և օրհնանքի քննադատութեանց. այսպիսի փոխման նիշ մըն է նաև ՚ի Հօրե օրհնակէն քիչման վարդապետութիւնը՝ ամենայն ՚ի մի աւարտեալ և մին յամենայնի բաշխեալ բղիտեալ անմիջականօրէն՝ ըստ հայեցուածոց և ըստ պիտոյից...

Ը. Աստուծոյ ամենուրեքութիւնն ալ թերեւս պատճառ մըն է (թիրիմացութեամբ) ամենաստուածութեան:

Թ. Ամահունքի ստանալու մահահանգուիս մէջ՝ միակ մեծ հիւանդութիւն մը կայ, և է՝ երկիւղը մահուան:

Ժ. Յաւանքից մէջ՝ միշտ այսօր է. վաղ չիկայ:

Կ. Պոլիս, Հոկտեմբեր 1910

ԽԱՉԳՆԱՐ

ԱՐՁԱԿ ԵՐԳԵՐ

Դուն ի՞նչ ըրիք իմ սրտիս: Անհո՞գ էր ան: Զերմակ ծաղիկները իրեն ընկեր էր ընտրած. աստղերուն կ'ուզէր պաշտի տալ, հովերը զրկել:

Անծայր դաշտերուն մէջ կը վազէր պղտիկ թռչուններուն չափ թեթև, ու իրիկունը ժպտումով կը մըմսէր իր անմեղ ազօթքը: Իրիկունը՝ երբ իր սիրական արեւը կորսուէր ծովերուն ետին:

Դուն ի՞նչ ըրիք իմ սրտիս: Տես, օրերուն հետ կը մեռնի ան, արցունքոտ սէրով, փակչող երազով:

Կուրծքիս տակ, հո՛ս, կը մեռնի, ու ա՛լ պղտիկ թռչուններուն թեթև վազքը չունի, եւ պաշտի չի տօր փայլուն աստղերուն...

Դուն ի՞նչ ըրիք իմ սրտիս:

Ծաղիկները բերել ես ինձի: Ծաղիկները կ'իջնան ոտքերու տակ: Միտո՞ղ բերել ես ինձի: Միտո՞ղ կը սառի փակ շրթներու տակ:

Ախ, այս իրիկուն հողիս այնքան հիւանդ է որ՝ մոռցեր եմ քեզի:

Ծաղիկները կ'իջնան ոտքերու տակ...

Ախ, այս իրիկուն հողիս այնքան հիւանդ է որ, տե՛ս, զգուանքներս կորսուել են:

Միտո՞ղ կը սառի փակ շրթներու տակ...

Կարծես կեանքը կեցել է մէջս: Մի՛ մեղադրել զիս: Կ'ուզէի չար ըլլալ: Կ'ուզէի գուրգուրալ քու նուէր ծաղիկներով և սրտիդ վրայ մանաւանդ: Բայց այս իրիկուն հողիս այնքան հիւանդ է որ, սրտիս տեղ՝ կարծես անասա՞ր սաւեր կսխառած ըլլային կուրծքիս տակ...

Այս առաւօտ արևը սրտիս մէջ արթնցայ: Այս առաւօտ արթնցայ արևը ձայնիս մէջ, բիրբերուս մէջ, մազերուս մէջ:

Արև կայ նոյնպէս ամէ՛ն տեղ իմ շուրջս: Արև կայ նոյնպէս բոլոր ծառերուն մէջ, բոլոր առուակներուն վրայ, և իմ սիրական բոլոր թռչուններու երգին մէջ:

Այս առաւօտ արեւ՝ կայ սրտիս մէջ:

Իմ սիրականս, տե՛ս, պղտիկ աղջկան մը պէս ժպտուն կուզած քեզի՛. պղտիկ աղջկան մը սէ՛րովը կուզած քեզի՛:

Այս առաւօտ արև կը բերնի քեզի ձայնիս մէջ, բիրբերուս մէջ, մազերուս մէջ:

Անցուր թևերդ մէջքիս և գեղջուկ սիրահարներու պէս, կ'ուզե՛ս, տանիք մեր սէրը՝ այսօր հեռուի լեռներուն, հեռուի ջուրբոսուն, հեռուի ծաղիկներուն, ուր արև կայ, արև՛, ինչպէս իմ սրտիս մէջ...

Փարիզ, ՄԱՆՆԱԿ ՊԵՐՍԻՆԵՆ